

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի երրորդ եռամսյակում Սյունիքի մարզպետարան մուտք գործած և առաքված փաստաթղթերի վերաբերյալ

2017 թվականի երրորդ եռամսյակում մարզպետարան է մուտքագրվել՝ 3089 թղթակցություն, առաքվել՝ 2113 փաստաթուղթ: Այդ թվում ստացվել է ՀՀ Ազգային ժողովից՝ 1, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանից՝ 2, ՀՀ կառավարությունից և վարչապետից՝ 353, ՀՀ նախարարություններից և գերատեսչություններից՝ 284, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայություններից և այլ կազմակերպություններից՝ 697, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ 1009, քաղաքացիներից՝ 735 դիմում, գաղտնի թղթակցություն՝ 8: ՀՀ կառավարությունից և վարչապետի աշխատակազմից մարզպետարան է վերահասցեագրվել 19, ՀՀ նախարարություններից՝ 1 դիմում:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը. ամսական մեկ անգամ մարզկենտրոնում (յուրաքանչյուր ամսվա վերջին երկուշաբթի օրը) կատարվել է քաղաքացիների ընդունելություն: Բացի այդ, քաղաքացիների ընդունելություն է կատարվել նաև մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ: 2017թ. երրորդ եռամսյակում կատարվել է 273 քաղաքացիների ընդունելություն: Մարզպետի մոտ ընդունելության համար հերթագրված և ընդունելությանը մասնակցած քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար տեղադրվում է մարզպետարանի պաշտոնական կայքէջում:

Աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները քաղաքացիների ընդունելությունը կազմակերպել են ամենօրյա, աշխատանքային կարգով:

Քաղաքացիների ընդունելության, նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին հաշվետվությունը և այդ աշխատանքների վիճակի մասին ամփոփ տեղեկատվությունը սահմանված պարբերականությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն ու ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

Քաղաքացիների ընդունելության արդյունքների մասին տեղեկատվություն է ներկայացվում նաև ՀՀ Նախագահի աշխատակազմ: